ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Ծրագիրը մշակվել է ՀՊՏՀ և ՀՀ ԿԲ փորձագիտական խմբերի համատեղ աշխատանքի շնորհիվ: Կրթական ծրագրի վերջնարդյունքները, դասավանդվող առարկաները և դրանց կրթական ծրագրերը կառուցված են միջազգային առաջատար փորձի, հայրենական ֆինանսական համակարգի պահանջների և ոլորտի զարգացման արդի միտումներին համապատասխան: Ուսումնառության ընթացքում կիրառվող մեթոդները, գիտելիքի գնահատման մեխանիզմները նպաստում են կրթական ծրագրի հիմնական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Կրթական ծրագրի շնորհիվ մագիստրոսները ձեռք են բերում համապատասխան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, որոնք նպաստում են կորպորատիվ ֆինանսների ոլորտում մրցունակ գործնական մասնագետ և հետազոտող լինելուն: Կորպորատիվ ֆինանսներ կրթական ծրագրի նպատակը ՀՀ կորպորատիվ ֆինանսների ոլորտի զարգացմանը նպաստող որակյալ կադրերի և հետազոտողների պատրաստումն է:

Ծրագրի տևողությունը

1,5 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
ժամը 18.20-ից

Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

Որակավորում

տնտեսագիտության մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՅԱՆԿ

առաջին կիսամյակ

Մոդուլ 1 (7 կրեդիտ)
1. Կորպորացիաների ֆինանսական կառավարում
2.Միաձուլումները և կլանումները կորպորացիաներում

Մոդուլ 2 (8 կրեդիտ)
1.Համակարգչային ծրագրերը ֆինանսական պլանավորման մեջ
2.Տվյալների բազաների վերլուծություն ֆինանսների համար

Մոդուլ 3 (7 կրեդիտ)
1.Ֆինանսական ռիսկերի կառավարումը կորպորացիաներում
2.Ներդրումային պորտֆելի կառավարում

Մոդուլ 4 (8 կրեդիտ)
1.Նախագծերի ֆինանսական պլանավորում և բյուջետավորում
2.Ֆինանսական ինովացիաները կորպորացիաներում

երկրորդ կիսամյակ

Մոդուլ 5 (7 կրեդիտ)
1.Կորպորացիաների միջազգային հարկում
2.Ֆինանսական մոդելավորում

Մոդուլ 6 (7 կրեդիտ)
1.Կիրառական միկրոէկոնոմիկա
2.Ֆինանսական էկոնոմետրիկա և կանխատեսումներ

Մոդուլ 7 (8 կրեդիտ)
1.Բիզնես անգլերեն և հաղորդակցման հմտություններ
ընտրովի առարկաներ
2.Python ֆինանսների համար
3.R ծրագրավորումը ֆինանսներում

Մոդուլ 8 (8 կրեդիտ)
1.Վարքագծային ֆինանսներ
2. Կորպորացիաների վարկանշում

երրորդ կիսամյակ

Մոդուլ 9 (6 կրեդիտ)
1.Ռազմավարական կառավարում
ընտրովի առարկաներ
2.Մարքեթինգ
3.Ներդրումային գնահատում

Մոդուլ 10 (4 կրեդիտ),
ընտրովի առարկաներ
1.Կորպորատիվ էթիկա
2.Կորպորացիաներում ֆինանսական հաշվառման առանձնահատկությունները
3. CFA ծրագրի նախապատրաստում

Մոդուլ 11 (6 կրեդիտ)
Գիտահետազոտական փորձառություն

Մոդուլ 12 (14 կրեդիտ)
Մագիստրոսական թեզ



ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Մագիստրոսական կրթական ծրագիրն իրականացվելու է ոլորտի հայտնի մասնագետների անմիջական ներգրավվածությամբ, ծրագրի ասոցացված գործընկերն է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ն:

Լևոն Վլադիմիրի Բարխուդարյան

Կրթական ծրագրի ղեկավար

տ.գ.թ. դոցենտ, ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ

2021 թ. մարտից առ այսօր՝Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ֆինանսների ամբիոնի վարիչ, 2016-2019թթ.՝ ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի տնօրեն, 2012-2016 թթ.՝ ՀՀ ՊԵԿ նախագահի, ապա ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական, 2011-2012 թթ.՝ ՀՊՏՀ հանրային ֆինանսների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, 2010-2011 թթ՝. ՀՊՏՀ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր, 2008-2009թթ.՝ «ԲՏԱ բանկ» ՓԲԸ, խորհրդի անդամ, 2001-2007թթ.՝ «Արմիմպեքսբանկ» ՓԲԸ, խորհրդի նախագահ, 2001-2017թթ.՝ «Ավագ Սոլյուշնս» ՍՊԸ, գլխավոր խորհրդական, 1999-2000թթ.՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար, 1997-1999թթ.՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Կանադայում, 1993-1997թթ.՝ ՀՀ ֆինանսների նախարար, 1990-1993թթ.՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, 1985-1990 թթ՝ ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող

Աշոտ Վարազդատի Մաթևոսյան

01.09.2019 – մինչ այժմ ՀՊՏՀ Ֆինանսներ ամբիոնի պրոֆեսոր, 28.03.2017-01.06.2019- ՀՊՏՀ դրամավարկային քաղաքականություն և տնտեսական աճ գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար, 01.09.2011-28.03.2017- ՀՊՏՀ Հաշվապահական հաշվառում և աուդիտ ֆակուլտետի դեկան, 01.09.2001-01.09.2011- ՀՊՏՀ ֆինանսներ ամբիոնում դասախոս, ասիստենտ, դոցենտ, 20.03.1995-01.11.1996 – «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արարատի մասնաճյուղ,ավագ տնտեսագետ, վարկային բաժնի պետ, կառավարչի տեղակալ, 01.03.1994- «Հայշինտրանս» արտադրական միավորում, տնտեսագետ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Սրբուհի Իսրայելյան

տնտեսագիտության թեկնածու, ունի 5 տարվա պետական կառավարման համակարգի և մասնավոր հատվածի, 8 տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ ֆինանսների ոլորտում: Արժանացել է ՀՀ կենտրոնական բանկի մրցանակի, «Կորպորատիվ ֆինանսներ» մասնագիտացմամբ վերապատրաստվել է արտերկրի առաջատար համալսարաններում, հեղինակ է 11 գիտական հոդվածի:

Էդգար Վահագնի Աղաբեկյան

2009 թվականից մինչ օրս՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ ներդրումային ընկերություն, ֆինանսական խորհրդատու, ապա՝ գլխավոր դիլեր, 2006–2008 թթ.՝ «Պրիվատ ինվեստ» ՓԲԸ ներդրումային ընկերություն, սկզբում՝ ներքին վերահսկող, այնուհետև՝ արժեթղթերի վարչության պետ, հետագայում՝գործառնական բաժնի գլխավոր մասնագետ, հետո՝ պետ, 2005–2006 թթ.՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, արժեթղթերի դիլեր: 2007 թվականից մինչ օրս՝ ՀՊՏՀ, «Արժեթղթերի շուկա» (այժմ՝ «Ֆինանսներ») ամբիոնի ասիստենտ, ապա՝ դոցենտ:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Վանինե Երանոսյան

01.09.2021թ.-ից մինչ այժմ ՀՊՏՀ Ֆինանսներ ամբիոնի դոցենտ, 01.09.2012թ-ից մինչև 01.08.2021թ. – ՀՊՏՀ Ֆինանսներ ամբիոնի ասիստենտ, 014 մասնագիտական խորհրդի անդամ, 2018-ից “Balkan Economic Review” առցանց գիտական ամսագրի խմբագրական խորհդի անդամ, 01.09.2012թ.-ից մինչ այժմ «Այ Փի Էմ Ռիսերչ» ՍՊԸ ֆինանսական ու զարգացման տնօրեն, 01.09.2017թ.-ից OPK Executive Consulting DWC-LLC-ի ընկերության նախագծերի կառավարիչ, արտաքին բիզնես խորհրդատու,«Ինտագմա» տվյալների մշակման ընկերության հիմնադիր:

Մարե Խաչատրյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Ունի շուրջ 10 տարվա մանկավարժական փորձ ֆինանսների ոլորտում /ՀՊՏՀ ֆինանսների ամբիոն/, հիմնական հետաքրքրությունների շրջանակում են կազմակերպությունների ֆինանսներն ու վերջիններիս առնչվող հիմնախնդիրները, հեղինակ է 14 գիտական հոդվածների և մեկ ուսումնական ձեռնարկի, ինչպես նաև մի շարք առարկայական ծրագրերի: Կատարել է օտարերկրյա համալսարանների ֆինանսների գծով մասնագիտացումների հետազոտական-վերլուծական աշխատանք, կորպորատիվ ֆինանսների գծով վերապատրաստվել է արտերկրում, ունի արտերկրում դասավանդման փորձ ֆինանսների գծով:

ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ֆինանսների նախարարությունը,
2. Կորպորատիվ կազմակերպությունները,
3. Ֆոնդային բորսա
4. Ֆինանսական ինստիտուտները (այդ թվում՝ բանկային և վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր),
5. Ֆինանսական շուկաների ենթակառուցվածքային համակարգերը (այդ թվում՝ ֆոնդային բորսա և առևտրային այլ համակարգեր, դեպոզիտարային և պահառուական այլ համակարգեր, քլիրինգային և վերջնահաշվարկային համակարգեր):

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտները կարող են աշխատել և զբաղեցնել ֆինանսական ոլորտին առնչվող տարբեր պաշտոններ և աշխատել.

- Կառավարության համապատասխան նախարարություններում, գերատեսչություններում, կոմիտեներում և այլն,
- Կենտրոնական բանկում,
- Առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական ստորաբաժանումներում
- Առևտրային բանկերում,
- Վարկային կազմակերպություններում,
- Ապահովագրական ընկերություններում,
- Ներդրումային ընկերություններում,
- Ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերում,
- Ֆոնդային բորսայում,
- Կենտրոնական դեպոզիտարիայում և այլն:

Ողջույն, ես Խորենն եմ:

Ավարտել եմ ՀՊՏՀ Ֆինանսական ֆակուլտետի բակալավիատը՝ գերազանց առաջադիմությամբ: Ակադեմիական բարձր արդյունքների և օտար լեզուների լավ տիրապետման շնորհիվ, ինձ հնարավորություն է տրվել համալսարանական կրթությանս ընթացքում Erasmus+ ծրագրի շրջանակներում նաև մեկ կիսամյակ սովորել արտերկրում՝ Խորվաթիայի Յու.Դոբրիլայի անվան Պուլայի համալսարանում:

Մագիստրոսական կրթությունս իրականացրել եմ ՀՊՏՀ Կորպորատիվ ֆինանսներ մասնագիտությամբ՝ կրկին գերազանց առաջադիմությամբ: Ծրագրի շնորհիվ ես կարողացա զարգացնել իմ հմտություններն ու կարողությունները կորպորատիվ ֆինասների և բիզնեսի ոլորտում, ինչի շնորհիվ այժմ **աշխատում եմ Հայաստանում գործող առաջատար SS ընկերություններից մեկում՝** «SoftConstruct»-**ում՝ որպես Կորպորատիվ գործընկերների զարգացման մասնագետ**: Վստահ եմ, որ մագիստրատուրայի ընթացքում ստացած արժեքավոր գիտելիքներս դեռ երկար ժամանակ պիտի կիրառվեն աշխատանքային պարտականություններիս կատարման ու հետագա կարիերայիս աճի ընթացքում:

Ողջույն, ես Մանեն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի ֆինանսերի բակալավրը, այնուհետև նույն ֆակուլտետի «Կորպորատիվ ֆինանսներ» մասնագիտացմամբ մագիստրատուրան: Դասախոսների ուսուցման ձևը, առաջադրած խնդիրներն ու առաջարկվող լուծումները հնարավորություն տվեցին յուրաքանչյուր հարցի նայել վերլուծական տեսանկյունից: Նրանց հետ աշխատանքը հիանալի էր:

Տարիների ընթացքում համալսարանում ձեռքբերածս գիտելիքները, մասնագիտական աշխարհայացքը հիմք հանդիսացան լավ աշխատանքային մեկնարկի: **Այժմ ես աշխատում եմ «ՀայՓոստ» ՓԲԸ-ում՝ կերտելով ֆինանսիստի հաջող ապագա**:

շրջանավարտներ

Ողջույն, ես Լիլիթն եմ:

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում ստացել եմ տնտեսագիտության բակալավրի աստիճան ֆինանսներ մասնագիտությամբ, այնուհետև ավարտել ՀՊՏՀ ֆինանսնական ֆակուլտետի «Կորպորատիվ ֆինանսներ» մասնագիտացմամբ մագիստրատուրան: Ուսումնառության ընթացքում դասավանդումը կազմակերպվել է ոլորտի առաջատար մասնագետների կողմից:

Համալսարանում ձեռքբերածս խորը գիտելիքները, մասնագիտական փորձը և հմտությունները օգնեցին գտնել իմ տեղը աշխատաշուկայում և այսօր **աշխատում եմ «ՀայՓոստ» ՓԲԸ-ում՝որպես անկանխիկ գործարքների իրականացման մասնագետ:**

Ողջույն,ես Արմինեն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի առկա բակալավրիատը, այնուհետև նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ կորպորատիվ ֆինանսներ մասնագիտությամբ:Ուսումնառությանս վեց տարիներն կարող եմ համարձակորեն հայտարարել լավագույններից, քանզի և հիշողությունները կապված ուսանողական տարիների հետ և ձեռքբերված փորձն ու բազմաբովանդակ տեսական գիտելիքները առավելագույնս ծառայել են նպատակին:

Վերջինիս թերևս,լավագույն դրսևորումը այն է, որ շնորհիվ խորը մասնագիտական գիտելիքների այժմ **աշխատում եմ ԱրմսվիսԲանկ ՓԲԸ-ում որպես Համադրման բաժնի մասնագետ:**